

ցիայի, թէ բոլոր ազգային-եկեղեցական-
կրթական հաստատութիւնները վրա Ռու-
սաստանում, թիւրքիայում և այլ տեղե-
րում, միանալ էջմիածնի տօնին և էջմիած-
նի Յօրել. Յանձնաժող. համարի կենտրոնա-
կան Սա այնքան պարզ իրողութիւն է, որ
երեկան անգամ կը հասկանայ. բայց ինչ
արած, որ Լէօի փառաբերութիւնից կու-
րացած կիրքը պղտորում է նրա տեսողու-
թիւնը և այդ շատ հասկանալի, շատ շօշա-
փիլի ճշմարտութիւնը տեսնել չէ կարողա-
նում:

Եթէ կիրքը, փառաբերութիւնը չէ խօ-
սում Լէօների և Զարգարիաների մէջ, նը-
րանք անմիջապէս պէտք է ընդունեն էջ-
միածնի առաջարկը և յարեն տօնը հոկտ.
13-ին էջմիածնում կատարելու որոշման:

«Մշակը», որ, յամենայն դէպս, էջմիածնի
այժմեան ղեկավարող շրջանները կողմից
բարեկամ չէ նկատուում, լոկ սկզբունքից
կորեկտութեան ու պատմական անհրաժեշ-
տութեան տեսակէտից առաջին իսկ օրից
որոշեց նախապատուութիւնը տալ էջմիած-
նին:

Եւ կարծում ենք, որ այդպէս կը վար-
վեն բոլոր անաշու, անկողմնակալ և նեղ
կուսակցական շահերից չը տարված անձինք,
այդպէս կը վարվեն բոլոր ազգային-եկեղե-
ցական-կրթական-կուլտուրական հաստա-
տութիւնները թէ Ռուսաստանում, թէ
Թիւրքիայում, թէ Պարսկաստանում և թէ
Ամերիկայում ու Եղիպտոսում և, նախան-
ձանդիր, որ հայկական գրերի գիտի
1500-ամեակը և տպագրութեան 400-ամեակը
լինի համազգային, համահայկական տօն,
արձագանք կը տան միայն Ամենայն Հայոց
կաթողիկոսի և էջմիածնի հրատէրին և կը
մասնակցեն իրանց շնորհաւորութիւննե-
րով, պատգամաւորութիւններով և յօ-
գուտ նամագրային ղարոցական Ֆօնդի
նուէրներով հոկտ. 13-ի մեծ տօնախմբու-
թեան:

Եթէ գանձել են հաստատութիւններ, ինչ-
պէս Եղիպտոսի Հ. Բ. Ընդհ. Միութիւնը,
որոնք տեղեկութիւն չունենալով էջմիածնի
որոշման մասին, յայտնել են, թէ կը մաս-
նակցեն նոյեմբերի 26-ի տօնին, թիֆլի-
սում, անշուշտ, նրանք կը փոխեն իրանց
որոշումը, ինչպէս արել է Բագուի կուլտ.
Միութիւնը:

Այժմ մի վերջին հարց կա:

Ինձ մի քանի անձինք կասկած յայտնե-
ցին, թէ էջմիածինը կենսունակ և ընդու-
նակ լինի կազմակերպել այդ մեծ ազգային
տօնը: Եւ իբրև ազացոյց բերում են այն
փաստը, որ էջմիածնի Յօրել. Յանձնաժո-
ղովը մինչև այսօր գրեթէ ոչինչ չէ արել.
Նա ղեռ պաշտօնական հրաւէրներ չէ ուղար-
կել բոլոր առաջնորդներին, թեմական և
այլ դպրոցներին, ազգային, կրթական,
կուլտուրական, բարեգործական հաստատու-
թիւններին, մամուլին, հայ դասակարգե-
րին, ինչպէս և արտասահմանեան հայ ազ-
գային-եկեղեցական-կրթական վարչութիւն-
ներին և հաստատութիւններին, նա չէ հրա-
տարակել նոյն իսկ տօնախմբութեան ծրա-
գիրը. մի խօսքով, նա միջոցներ ձեռք չէ
առել տօնը դարձնելու շքեղ, արգասաւոր և
համահայկական:

Եւ չը գիտեմ, զուցէ այդ կասկածը
արդարացի է, բայց զուցէ և անտեղի և
վաղաժամ էթէ էջմիածինը օգուտ չը քա-
ղի այդպիսի մի յարմար առիթից իր ըն-
կած պրէստիժը մի քիչ բարձրացնելու, հա-
յութեան հետ մի քիչ բարոյապէս կապի-
լու, այլ ևս յաւիտեան անկարող կը լինի
վերականգնել այդ պրէստիժը: Այդպիսի
յարմար դէպքեր և առիթներ շատ հազուա-
գիտ են. հասարակական կարծիքը, նոյն
իսկ դէպի էջմիածինը վատ տրամադրված
կուսերի կարծիքը՝ այդ հարցում էջմիածնի
խռովն է: Եթէ էջմիածինը չըմբռնի, չը
հասկանայ իր անկրթը և չը կարողանայ
օգտուիլ ներկայ յարմար դէպքից ու տեղի
չը տայ թայֆայական շահերին, աշխատի
բարձր պահել իր հեղինակութիւնը, զոր-
ծաղիկով իր որոշումը և ամեն միջոց կի-
րարկելով տալ տօնախմբութեան համազ-
գային ընաւորութիւն, նա արդէն զբանով
կը կանխավճռէ այն հարցը, թէ կարող ենք
սպասել էջմիածնից որեւէ բան, առաջադի-
մութիւն, թէ նրա վրա այլ ևս խաչ պէտք
է զնի:

Մենք կատարեցինք մեր պարտքը, իբրև
հրապարակախօս, իբրև հայ և իբրև շիտակ
ու ուղղամիտ ընդդիմադիր, որ գիտէ դա-
տել միայն գործերով և ոչ անձնական հա-
կակրութեամբ կամ համակրութեամբ:

Հ. Առաքելեան

ԳՐԵՆԻ ԳԻՒՏԻ 1500-ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ

Մի քանի ամից յետոյ հայ ժողովուրդը
պիտի տօնէ գրերի գիւտի 1500 և տպա-
գրութեան 400-ամեակը, էութեամբ իրար
հետ շաղկապված, մեր մտաւոր կեանքի և
քաղաքակրթութեան երկու փառաւոր տօ-
ներ Մամուլի մէջ, այլ և այլ շրջաններում
բազմաթիւ առաջարկութիւնները ներված
և ծրագրերն նախագծված այդ առիթով:
Եթէ զբանք մի փոքրիկ մասն էլ իրազօր-
վի, շատ զո՞ պիտի մնանք:

Այսպէս մտածելով հանգիւրձ՝ ուշադրու-
թիւն ենք հրաւիրում մի նոր, բայց կարե-
ւոր և հեշտութեամբ իրագործելի խնդրի
վրա՝ 1500 տարվայ ընթացքում հայոց
գրերն անփոփոխ մեր ձեռքը չեն հասել,

ինչպէս ձևակերպել է գիւտի մեծ հեղինա-
կը՝ ա. Մեսրոպ Յոյց տալ նրանց բազմա-
զան ձևակերպութիւններն ու զարգացման
ընթացքը երկար դարերի ընթացքում՝ մեր
անմիջական պարտաւորութիւններից մէկն
է այն տօնի առիթով: Մինչև այժմ կա-
տարված են գնահատելի աշխատութիւններ,
բայց բաւաւոր համարվել չեն կարող նիթի
աղբատութեան պատճառով: Պէտք է հաւա-
քել և իրականարչական վերարտադրու-
թեամբ բնատարակել հայ գրքի ամենահին
օրինակներից մինչև մեր օրերը մի հա-
րուտ ժողովածու, որ մեզ փաստորէն և
ժամանակագրական կարգով դադափար տալ
հայ գրի զարգացման մասին: Մայր Աթոռի
Յօրելեանական Յանձնաժողովը իր հրատա-
րակելիք գիտական ժողովածուի մէջ ծրա-
գրել է այդպիսի մի յօդուած:

Տարբարագրաբար շատ հին ձեռագիրներ
չունենք. թւականով յայտնի ամենահին ձե-
ռագիրը՝ 887 թ.՝ Լազարեան ճեմարանի
աւետարանն է: Դրա դարից մի քանի ձեռա-
գիրներ ունենք, և դժուար չի լինի հայ գրերի
պէսպիսութեանց մասին որոշ չափով զա-
դափար տալ: Համեմատաբար աւելի հին
են թւականով արձանագրութիւնները, ինչ-
պէս կոմիտաս կաթողիկոսի երկու արձա-
նագրութիւնները՝ Հեթիտի մէջ վանքի վրա
618 թ.ից, Անիի Միջնաբերդի եկեղեցու
արձանագրութիւնը 629 թ., Զուարթնոցը
640-ական, Արուճի, Գրիգորեան և Ներսէճ
Կամարականներ է. դարի երկրորդ կէտից,
Ուխտատար վանականինք 783 թ. և այլն:
Այս բոլոր արձանագրութիւնները մասամբ
լուսանկարված են և մասամբ կը լրացնենք
ամառվայ ընթացքում:

Բայց աւելի նազդին արձանագրութիւններ
կան յիշատակված հանգուցեալ Մակար եպ.
Բարխուդարեանի «Աղուանից երկիր և դրա-
ցիք» (տպված Թիֆլիս, 1893 թ.) աշխատու-
թեան մէջ*) 563, 571, 573, 581, 591, 601, 611
թ.թ.: Դրանք բոլորը դարձանական արձա-
նագրութիւններ են և մէկը (611 թ.) նոյն
իսկ խաչքարի Յիշատակվում են և ուրիշ
արձանագրութիւններ 623, 624, 648, 651,
671, 751, 755 թւականներով: Թէպէտ
կասկածի օրինաւոր հիմքեր կան այդ ար-
ձանագրութիւնների ոմանց հուսթեան մա-
սին, բայց վերջնական վճիռ տալ ամբող-
ջութեան մասին վաղաժամ է՝ առանց ստու-
գութեան:

Մենք առաջարկում ենք հնագիտական մի
փոքրիկ ճանապարհորդութիւն կազմակեր-
պել Ազգադրական Ընկերութեան հրահանգ-
ներով և ղեկավարութեամբ, որի նպատակը
պիտի լինի միմիայն ստուգել վերոյիշեալ
արձանագրութիւնների ճշգրտութիւնը՝ էս-
տամբժով և լուսանկարութեամբ տալով
նրանց պատկերները: Ինչ եղբակցութեան
էլ հասնելու լինի այդ քննութիւնը, գի-
տութիւնը իր շահը կունենայ: Դրական եղ-
րակացութեան դէպքում, յատկապէս՝ ոչ
միայն հայ գրութեան այդպիսի հին օրի-
նակներ ձեռք կը բերվեն, այլ և կը պարզ-
վի հայ թւականի գործածութեան և խաչ-
քարերի արուեստի ծագման ժամանակը:
Յայտնի է, թէ ինչպիսի բարձր զարգաց-
ման է հասել խաչքարերի արուեստը հայոց
մէջ. բայց թւականով հին դարերից մնա-
ցորդներ չունենք: Թէպէտ կան հիմքեր, ու-
րով նրանց ծագումը մինչև է. դար կարելի
է հասցնել, բայց այդքան վաղ ժամանակից
թւականով և գրութեամբ խաչքարերի գո-
յութիւնը ուրիշ արժէք կունենայ հայ ա-
րուեստի պատմութեան համար:

Այդպիսի մի ճանապարհորդութեան հա-
մար հարկաւոր կը լինի ոչ աւելի քան 3—4
հարիւր բարբի: Առատ միջոցներից զուրկ
Ազգադրական Ընկերութեան համար, զուցէ,
դժուար կը լինի այդ արտաքոյ կարգի
ծախսը իր վրա առնել: այս դէպքում օգ-
նութեան պիտի գան Թիֆլիսի Բարեգոր-
ծական, Բագուի Կուլտուրական կամ
մասնաւոր մեկնասններ:

Անա մի գործ, որ անմիջական կազ ունի
զալիք տօների հետ և որի մասին անտար-
բեր մնալու իրաւունք չունենք:

Գարեգին վարդապետ
էջմիածին, 12 յուլիսի

ՃԱՄԱՆԱԿԸ ՅԱՐՄԱՐ Է

Շատ անգամ մեր մէջ յարուցվել են ու-
սումնասիրութեան կարօտ զանազան խըն-
դիրներ—ստեղծական դրութեան, համայն-
քի, կալուածատիրութեան, սոյային արհեստ-
ների, գիւղամաստեղութեան և շատ ուրիշ
ուսումնասիրելի խնդիրներ—բայց զբանք
համարեա թէ մնացել են անգործաղբի:

Ամեն ամառ արձակուրդների պատճառով
մեր գաւառական քաղաքներում և գիւղե-
րում ցրված են լինում շատ ուսանողներ:

Անգրկովկասի գեղեցիկ կլիման, հարուստ
բուսականութիւնը բաւական զբաւիչ են մի
քանի ամիս դուրսնալու համար, և ան-
կասկած ուսանողն շտապում է այդ բանից
օգուտ քաղելու:

Բայց միթէ միայն դուրսնալով պէտք
է բաւականանայ ուսանող երիտասարդու-
թիւնը:

Ամենքին յայտնի է, թէ համալսարանա-
կան երիտասարդութիւնն ինչ ընդհանուր
մտքեր է յայտնում մեր ժողովրդի կեանքի
ուսումնասիրութեան վերաբերեալ, թէ ինչ
զատողութիւններ է տալիս մեր ժողովրդի

*) Երև 109, 134, 200, 204—5, 215—6.